ՆԱԽԱԳԻԾ

**Ավիասպասարկման ծառայությունների գնման պետական պայմանագիր**
**N ԴՀՄՖՀԿՇՀԾՁԲ 11/2-14/3**

ք. Երևան «  » «  » 2014թ.

Դպրոցականների հանրապետական մարզական ֆեդերացիա ՀԿ-ն, ի դեմս ֆեդերացիայի նախագահ՝ Ա. Մեհրաբյանի, որը գործում է կազմակերպության կանոնադրության հիման վրա (այսուհետև՝ Պատվիրատու), մի կողմից և ---------------------------------- ն, ի դեմս Ընկերության գլխավոր տնօրեն ----------------------ի (այսուհետև՝ Կատարող), մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին:

## 1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

Պատվիրատուն հանձնարարում է, իսկ Կատարողը ստանձնում ավիասպասարկման ծառայությունների մատուցման պարտավորությունը (այսուհետև՝ Ծառայություն)՝ համաձայն սույն պայմանագրի անբաժանելի մասը կազմող N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագրի և N 2 հավելվածով սահմանված գնման ժամանակացույցի պահանջների:

## 2. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

**2.1 Պատվիրատուն իրավունք ունի՝**

2.1.1 Ցանկացած ժամանակ ստուգել Կատարողի կողմից մատուցվող Ծառայության ընթացքը և որակը՝ առանց միջամտելու Կատարողի գործունեությանը.

2.1.2 Եթե մատուցվել է սույն պայմանագրի N 1 հավելվածում նշված Տեխնիկական բնութագրին չհամապատասխանող Ծառայություն.

ա/ Չընդունել Ծառայությանը՝ իր հայեցողությամբ սահմանել անպատշաճ որակի Ծառայությունը սույն պայմանագրին համապատասխանող Ծառայությամբ անհատույց փոխարինման ողջամիտ ժամկետ և պահանջել Կատարողից վճարելու սույն պայմանագրի 5.2 կետով նախատեսված տուգանքը, ինչպես նաև 5.3 կետով նախատեսված տույժը;

բ/ Հրաժարվել սույն պայմանագիրը կատարելուց և պահանջել վերադարձնելու Ծառայության համար վճարված գումարը և պահանջել Կատարողից վճարելու սույն պայմանագրի 5.2 կետով նախատեսված տուգանքը:

2.1.3 Միակողմանի լուծել սույն պայմանագիրը, եթե Կատարողը էականորեն խախտել է սույն պայմանագիրը: Կատարողի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում , եթե՝

ա/ մատուցված Ծառայությունը չի համապատասխանում N 1 հավելվածով սահմանված պահանջներին,

բ/ խախտվել է Ծառայության մատուցման ժամկետը:

**2.2 Պատվիրատուն պարտավոր է՝**

2.2.1 Քննարկել և ընդունել Տեխնիկական բնութագրին համապատասխան մատուցված Ծառայության արդյունքը, իսկ Ծառայության արդյունքում թերություններ հայտնաբերելու դեպքերում՝ այդ մասին անհապաղ գրավոր հայտնել Կատարողին:

2.2.2 Ծառայության արդյունքն ընդունելու դեպքում Կատարողին վճարել վերջինիս վճարման ենթակա գումարները, իսկ ժամկետի խախտման դեպքում՝ նաև սույն պայմանագրի 5.5 կետով նախատեսված տույժը:

**2.3 Կատարողն իրավունք ունի՝**

2.3.1 Պատվիրատուից պահանջել վճարելու իրեն վճարման ենթակա գումարները, իսկ Պատվիրատուի կողմից սույն պայմանագրի 4.2 կետով նշված ժամկետի խախտման դեպքում նաև սույն պայմանագրի 5.5 կետով նախատեսված տույժը:

**2.4 Կատարողը պարտավոր է՝ .**

2.4.1 Սույն պայմանագրի N 1 հավելվածով սահմանված պայմաններով ապահովել Ծառայության մատուցումը՝ ղեկավարվելով գործող օրենսդրությամբ:

2.4.2 Սույն պայմանագրի նախատեսված դեպքում վճարել սույն պայմանագրի 5.2 և 5.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը:

2.4.3 Սույն պայմանագրի կատարման /կանխավճարի/ ապահովման գործողության ընթացքում լուծարման կամ սանկցման գործընթաց սկսելու դեպքում դրա մասին նախապես գրավոր տեղեկացնել պատվիրատուին:

## 3. ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՀԱՆՁՆՄԱՆ ԵՎ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՐԳԸ

3.1 Պայմանագրի կամ դրա մի մասի կատարման արդյունքները ընդունվում են Պատվիրատուի և Կատարողի միջև հանձնման-ընդունման արձանագրության /այսուհետ՝ արձանագրություն/ ստորագրմամբ:

Կատարողը Ծառայության մատուցման ավարտից 5 աշխատանքային օրվա ընթացքում Պատվիրատուին է հանձնում մատուցված Ծառայության մասին իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրության երկու օրինակ:

3.2 Արձանագրությունը ստորագրվում է, եթե մատուցված Ծառայությունը համապատասխանում է պայմանագրի պայմաններին: Հակառակ դեպքում, պայմանագրի կամ դրա մի մասի կատարման արդյունքները չեն ընդունվում արձանագրություն չի ստորագրվում և պատվիրատուն՝

ա/ հարցի կարգավորման համար ձեռնարկում է նման իրավիճակի համար սույն պայմանագրով նախատեսված միջոցները;

բ/ Կատարողի նկատմամբ կիրառում է սույն պայմանագրով նախատեսված միջոցները:

3.3 Պատվիրատուն հանձնման-ընդունման արձանագրությունը ստանալու պահից հնգօրյա ժամկետում Կատարողին է ներկայացնում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրության մեկ օրինակը կամ Ծառայությունը չընդունելու պատճառաբանված մերժումը:

## 4. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳԻՆԸ

4.1. Սույն պայմանագրով Կատարողի մատուցման ենթակա Ծառայության ընդհանուր գինը կազմում է --------------------- /-- ----------------/ ՀՀ դրամ: Գինը ներառում է ՀՀ օրենսդրության սահմանված հարկերը և պարտադիր այլ վճարները, ինչպես նաև Կատարողի կողմից իրականացվող բոլոր ծախսերը:

4.2 Պատվիրատուն իրեն մատուցած Ծառայության դիմաց վճարում է անկանխիկ՝ դրամական միջոցները Կատարողի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով: Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձնման-ընդունման արձանագրության հիման վրա՝ մինչև **<u>ս.թ. մայիսի 10-ը</u>**:

## 5. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

5.1 Կատարողը պատասխանատվություն է կրում Ծառայության մատուցման՝ սույն պայմանագրի պահանջների պահպանման համար:

5.2 Սույն պայմանագրի N 1 հավելվածում նշված Տեխնիկական բնութագրին չհամապատասխանող Ծառայություն մատուցելու յուրաքանչյուր դեպքում Կատարողից գանձվում է տուգանք՝ սույն պայմանագրի 4.1 կետում նախատեսված գումարի 0.5%-ի չափով:

5.3 Սույն պայմանագրով նախատեսված Ծառայության մատուցման ժամկետը խախտելու դեպքում Կատարողից յուրաքանչյուր ուշացված օրվա համար գանձվում է տույժ՝ պայմանագրի գնի 0.05%-ի չափով, իսկ տույժերի հաշվարկումն իրականացվում է օրացուցային օրերով՝ պայմանագրի չկատարած մասի գնի նկատմամբ:

5.4 Սույն պայմանագրի 5.2 և 5.3 կետերով նախատեսված տուգանքը և տույժը հաշվարկվում և հաշվանցվում են Ծառայության մատուցման արդյունքում Կատարողին վճարման ենթակա գումարներից:

5.5 Պատվիրատուի կողմից սույն պայմանագրի 4.2 կետով նախատեսված ժամկետի խախտման համար Պատվիրատուի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա, սակայն չվճարված գումարի 0,05%-ի չափով:

5.6 Սույն պայմանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվության են ենթարկվում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

5.7 Տուգանքի և տույժի վճարումը Կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտավորությունները լրիվ կատարելուց:

## 6. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆ (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

Սույն պայմանագրով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը Կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

## 7. ԵԶՐԱՓԱԿԻՉ ԴՐՈՒՅԹՆԵՐ

7.1 Սույն պայմանագիրն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից և գործում է մինչև կողմերի միջև փոխադարձ պարտավորությունների կատարման ավարտը:

7.2 Այն դեպքում, երբ օրենքով նախատեսված կարգով գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության պահանջների կատարման նկատմամբ հսկողության և (կամ) վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ գնման գործընթացում, մինչև պայմանագրի կնքումը, կատարողը ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ կատարողին հաղթող ճանաչելու (ընտրելու) մասին որոշումը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ապա այդ հիմքերն ի հայտ գալուց հետո պատվիրատուն իրավունք ունի միակողմանիորեն լուծելու պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում, պատվիրատուն չի կրում պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով կատարողի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ կատարողը պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով փոխհատուցել իր մեղքով պատվիրատուի կրած վնասներն այն ծավալով, որը չի ծածկվում մինչև լուծումը գնման պայմանագրի կատարմամբ պատվիրատուի ստացածով:

7.3 Սույն պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ նոր պայմանագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա սույն պայմանագրի անբաժանելի մասը:

7.4 Սույն պայմանագիրը չի կարող փոփոխվել կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման հետևանքով կամ ամբողջությամբ լուծվել կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ բացառությամբ.

1) Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով տվյալ գնումը կատարելու համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցման դեպքերի: Ընդ որում, պայմանագրի կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման կամ ամբողջությամբ լուծման կողմերի փոխադարձ համաձայնությունն անհրաժեշտ է ձեռք բերել նախքան Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով տվյալ գնումը կատարելու համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցումը:

2) Պայմանագրով նախատեսված Ծառայության շուկայական գների ավելի քան քսան տոկոսով փոփոխման դեպքերի: Շուկայական գները կորոշվեն և դրանց փոփոխությունը կգնահատվի նախապես համաձայնեցվելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության հետ, որի վերաբերյալ կկնքվի լրացուցիչ համաձայնագիր:

7.5 Արգելվում է սույն պայմանագրում կատարել այնպիսի փոփոխություններ, որոնք հանգեցնում են գնվող ծառայության ծավալների, ձեռք բերվող գնման առարկաների միավորի գնի կամ պայմանագրի գնի արհեստական փոփոխման:

Ծառայությունների մատուցման ժամկետը կարող է երկարաձգվել մինչև այդ ժամկետը լրանալը պայմանագրի կողմի առաջարկության առկայության դեպքում՝ պայմանով, որ պատվիրատուի մոտ չի վերացել գնման առարկայի օգտագործման պահանջը:

7.6 Սույն պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են դատական կարգով:

7.7 Սույն պայմանագիրը կազմված է 4 էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ: Յուրաքանչյուր կողմին տրվում է պայմանագրի մեկական օրինակ: Սույն պայմանագրի N 1 և N 2 հավելվածները համարվում են պայմանագրի անբաժանելի մասը:

7.8 Սույն Պայմանագրի նկատմամբ կիրառվում է ՀՀ իրավունքը:

**8. ԿՈՂՄԵՐԻ ՀԱՍՑԵՆԵՐԸ, ԲԱՆԿԱՅԻՆ ՎԱՎԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐԸ ԵՎ ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ**

| Պատվիրատու | Կատարող |
|---|---|
| Դպրոցականների հանրապետական մարզական ֆեդերացիա ՀԿ | ------------------------------ |
| ք. Երևան, Ազաթանգեղոսի 13 | ------------------------------ |
| Արարատբանկ ԲԲԸ | ------------------------------ |
| Հ/Հ 1510022842720100 | ------------------------------ |
| ՀՎՀՀ 02700421 | ------------------------------ |
| Ֆեդերացիայի նախագահ՝ | Տնօրեն՝ |
| ------------------------ Ա. Մեհրաբյան | ------------------------ |
| (ստորագրություն) Կ.Տ. | (ստորագրություն) Կ.Տ. |

Հավելված 1
'----' '-----' 2014թ կնքված
թիվ ԴՀՄՖՀԿՇՀԾՁԲ 11/2-14/3 գնման պայմանագրի

## Տեխնիկական բնութագիր

Գնման առարկա են հանդիսանում ավիասպասարկման ծառայությունները
(Այսուհետ՝ Ծառայություն)

**1-ին չափաբաժին.**
**Ավիասպասարկման ծառայություն-1**
Ծառայությունը ներառում է <<Էկոնոմ>> կարգի ավիատոմսի վաճառք Երևան – Մոսկվա - Կազան – Մոսկվա - Երևան ուղղություններով՝

| | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| S7 | 912 | Q | SA19APR | EVNDME | HK1 | 2155 | 0050+1 | 320 M0 | R |
| S7 | 061 | Q | SU20APR | DMEKZN | HK1 | 0745 | 0915 | 319 R0 | R |
| S7 | 062 | S | SU27APR | KZNDME | HK1 | 0955 | 1140 | 319 R0 | R |
| S7 | 905 | S | SU27APR | DMEEVN | HK1 | 1355 | 1650 | 321 M0 | R |

**2-րդ չափաբաժին.**
**Ավիասպասարկման ծառայություն-2**
Ծառայությունը ներառում է <<Էկոնոմ>> կարգի ավիատոմսի վաճառք Երևան – Հռոմ - Կագլիարի – Հռոմ - Թբիլիսի ուղղություններով՝

| | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|
| AZ | 557 | 26APR | 6 | EVNFCO | 0520 | 0745 |
| AZ | 1581 | 26APR | 6 | FCOCAG | 1110 | 1220 |
| AZ | 1596 | 03MAY | 6 | CAGFCO | 1905 | 2010 |
| AZ | 550 | 03MAY | 6 | FCOTBS | 2135 | 0335+1 |

**1- 2 չափաբաժինների համար՝**

«Էկոնոմ կարգի» ավիատոմսերի հետ վերադարձնելու և ուղևորի փոփոխության հնարավորություն: Չվերթի ժամը կամ օրը փոխելու դեպքում 2 ժամվա ընթացքում Պատվիրատուին նախապես տեղեկացնելու հնարավորություն: Ավիատոմսերի առաքում Պատվիրատուին:

| Պատվիրատու | Կատարող |
|---|---|
| ------------------------ Ա. Մեհրաբյան | ------------------------ |
| (ստորագրություն) Կ.Տ. | /ստորագրություն/ Կ.Տ. |

Հավելված 2
'___'  '____' 2014թ կնքված
թիվ ԴՀՄ ՖՀԿՇՀԾՁԲ 11/2-14/3 գնման պայմանագրի

## Գնման ժամանակացույց

| Չափ աբաժ ին | Գնման առարկայի անվանումը | Չափի միավո րը | Միավ որի գինը, հազա ր դրամ | Ենթակա է գնման 2014թ | | | | Ընդամենը | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | | | 2-րդ եռամսյակում՝ մինչև ս.թ. ապրիլի 18-ը | | 2-րդ եռամսյակում՝ մինչև ս.թ. ապրիլի 22-ը | | | |
| | | | | Քանա կը | Գումարը, հազար դրամ | Քանա կը | Գումարը, հազար դրամ | Քան ակը | Գումա րը, հազա ր դրամ |
| 1 | Ավիապասարկման ծառայություն-1 | տոմս | | 15 | | | | 15 | |
| 2 | Ավիապասարկման ծառայություն-2 | տոմս | | | | 15 | | 15 | |

Պատվիրատու

____________________ Ա. Մեհրաբյան
(ստորագրություն)  Կ.Տ.

Կատարող

____________________
/ստորագրություն/  Կ.Տ.